ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4215-Ա « 31 » օգոստոսի 2026թ.

ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 59-րդ հոդվածով և 84-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով «Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի տնօրենի 04.08.2026թ. հ.5/17-418 գրությունը և «Բիդ ապրանքա-հումքային բորսա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 08.07.2026թ. տրված Թիվ 300626/1 գնահատման հաշվետվությունը.

1. Երևանի ենթակայության «Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ հաշվեկշռում հաշվառված, սույն որոշման հավելվածում ընգրկված ավտոմեքենաների օտարման մեկնարկային գները սահմանել «Բիդ ապրանքա-հումքային բորսա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից գնահատված՝ հավելվածում նշված շուկայական արժեքները:

2. Հանձնարարել Ընկերության տնօրենին՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համապատասխան ստորաբաժանումում կատարել օտարված տրանսպորտային միջոցներին վերաբերող համապատասխան փաստաթղթերի ձևակերպումները:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետի և Ընկերության տնօրենի վրա:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Ս. Մադաթյանի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
31.08. 2026թ.
հ. 4215-Ա որոշման

ՑԱՆԿ
«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ

ՀՀ դրամ

ՀՀ	Անվանումը	պետհամարանիշը	Քանակ	Մեկնարկային գները
1	JIN BEI SY5038XJHL-M1S1BH	314 CF 61	1	2,518,000
2	HYUNDAI H 100	095 DD 61	1	488,000
Ընդամենը՝			**2**	**3,006,000**

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**